

Կենսաբանություն

УДК 581.9+581.526

Զ. Գ. ԱՎԱԳՅԱՆ, Ա. Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՊԻՏԱԿԻ ՇՐՋԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՍԱՐԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՖԼՈՐԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Աստվածածին սարը գտնվում է ծ.մ-ից 1700–2000մ բարձրության վրա [1]: Նրա տարածքը ծածկված է տափաստանային, տրագականտային բուսականությամբ, մարգագետիններով և պետրոֆիտներով: Աստվածածին սարի ֆլորան մտնում է Կովկասյան գավառի մեջ և գտնվում է Լոռու ֆլորիստական շրջանում՝ Շիրակի և Ապարանի շրջանների հարևանությամբ: Ուսումնասիրվող շրջանի ֆլորայի յուրահատկությունը պայմանավորված է նրանով, որ այն գտնվում է խոշոր ֆիտոխորիոնների սահմաններին կից:

Տարածքում հայտնաբերված են 250 տեսակ բույսեր, որոնք պատկանում են 117 ցեղերի և 37 ընտանիքերի: Այդ բուսականությունում առաջին տեղը գրավում են Asteraceae ընտանիքի ներկայացուցիչները, երկրորդ տեղը՝ Poaceae ընտանիքը, որը բնորոշ է հյուսիսային Հայաստանի և մեծ մասամբ ոչ անտառային հատվածների համար: Երրորդ տեղում Fabaceae ընտանիքն է: Այսպիսի հաջորդականությունը անկասկած ուսումնասիրված ֆլորայի հնամիջերկրածովային հատկանիշն է: Caryophyllaceae-ն գրավում է չորրորդ տեղը: Lamiaceae ընտանիքը ևս ներկայացված է տեսակային մեծ բազմազանությամբ, որը միջինասիական ֆլորայի բնորոշ գիծն է: Rosaceae ընտանիքը ներկայացված է 10 տեսակով [2]:

Աստվածածին սարի տարածքում լավ են արտահայտված ֆենոսապեկոները: Մայիսի երկրորդ տասնամյակին սկսում են վեգետացիան էֆեմերներն ու էֆեմերոիդները: Ծաղկում են սագասոխուկը երկու տեսակով (*Gagea hulhifera*, *G. chanae*), պապլորը (*Muscari szovitsianum*), դաշտային վառվռուկը (*Allysum minus*), ալբանական քնախոտը (*Pulsatila albana*), բերենիկը (*Veronica armena*), բոշխերը (*Carex disticha*, *C. humilis*): 1720-ի վրա բուսականությունում ավելանում են օշինդրները, խատուտիկը, շատանում են պապլորները: Ֆոնը կանաչ է, որի վրա երևում են տարբեր գունավորման կետեր՝ դեղին, կապույտ: Իրենց վեգետացիան են սկսում գորտնուկների, մատնունիների և անմոռուկների տեսակները: Ժայռերը ծածկված են մամուռներով և քարաքոսերով: Հանդիպում է նաև պտերներից ստենոխոր բույսը՝ բազմառտիկը (*Polypodium vulgare*), բարձիկանման գոյացություններ են առաջացնում դաշտային մանանեխը (*Sinapis arvensis*), ճոճուկը (*Cerastium nemorale*), զանգակների տեսակները: Գեոֆիտներից ծաղկում են պուշկինիան (*Puschkinia scilloides*), մկնասոխը (*Scilla sibirica*), սագասոխուկը (*Gagea chanae*), աստղա-

շուշանը (*Ornithogalum montanum*): Տարածքում քիերից հանդիպում է գերիմաստին (*Viburnum lantana*), իսկ 1900-մ բարձրության վրա՝ գիհին (*Juniperus depressa*):

Տրագալանտնիկներում էդիֆիկատոր է հանդիսանում *Astragalus microcephalus*-ը: *Androsace albana*-ն առաջացնում է համատարած սպիտակ տարածք: Խոտածածկը նոսր է, հանդիպում են կատվադաղձը, ուրցը, մակարդախոտը:

Տարածքում հանդիպում են շրթնազգիների, դաշտավուկազգիների, կաղամբազգիների ընտանիքների ներկայացուցիչներ:

Հունիսի առաջին տասնամյակում 1750-մ բարձրության վրա տրագալանտնիկներում բուսածածկը կազմում է 30–40%: Ծաղկում են նրբագեղ կելերիան (*Koeleria gracilis*), սոխուկավոր դաշտավուկը (*Poa bulbosa*), բարձիկավոր զանգակը (*Campasula aucheri*), լեռնային աստղաշուշանը (*Ornithogalum montanum*), դեղին հափուկը (*Reseda lutea*): Դեպի տափաստանային հատված աճում են եղեսպակը, կուժկոտրուկը, բոշխը, աստղաշուշանը, մինուարտիան, որն առաջացնում է սպիտակ գորգեր: Աճում են նաև ալպիական մատիտեղը (*Polygonum alpinum*), ավելուկը (*Rumex crispus*): Այդ հատվածում մեծ քանակություն են կազմում դաշտավուկազգիները, շրթնազգիները, կաղամբազգիները, մեխակազգիները: Սարի ստորին հատվածում աճում են բանգին, արևելյան կակաչը:

Հունիսի երկրորդ տասնամյակում բուսածածկը փարթամ է: Էֆեմերներն ու էֆեմերոիդները պտղակալում են: 1850-մ բարձրության վրա համատարած ծաղկում են ճոճուկները 3 տեսակով, զանգակները, եղջերառվույտը, սինձը, սիզախոտը (*Phleum phleoides*), ցորնուկը (*Bromus variegatus*), կելերիան, դաշտավուկը:

Բուսածածկը տափաստանային հատվածում կազմում է 80–90%, ֆոնը կանաչ է՝ դեղին կետավորությամբ: Հանդիպում է մեծ քանակությամբ պնակախոտ (*Scutellaria orientalis*), որը կանաչ ֆոնի վրա առաջացնում է կապտավուն գծեր:

1950-մ-ի վրա հանդիպում են երիցուկը (*Pyrethrum roseum*), գնձնձուկը (*Talictum minus*), լոշտակը (*Bryonia alba*), անմոռուկը: Այս տարածքում աճում են խլածաղիկ 5 տեսակ (*Scrophularia orientalis*, *S. chrysantha*, *S. grossheimii*, *S. rupestris*, *S. variegata*), մակարդախոտի տեսակները, քիերից հանդիպում են ասպիրակը *Spiraea hypericifolia*), մասրենին, գերիմաստին, գիհին: Տրագալանտնիկներում գերիշխում են շրթնազգիները, դաշտավուկազգիներից՝ փետրախոտերը, բակլազգիները: Ֆոնը հուլիսի սկզբին սպիտակամանուշակագույն է: Համատարած ծաղկում են զագերը: Տրագալանտնիկների և տափաստանային բուսականության միջև քարքարոտ հատվածներում շատ են դաշտավուկազգիները, օշինդրը (*Artemisia splendens*): Այդ հատվածից դեպի գագաթ տարածված է հացազգա-տարախոտային բուսականություն: Ժայռերի հյուսիսարևելյան մասն ավելի հարուստ է բուսատեսակներով, քան հարավայինը:

Ուսումնասիրված տարածքում աճում են ուտելի բույսեր և դեղաբույսեր՝ լոշտակը, սրոհունդը, ուրցը, խատուտիկը, թռչնային մատիտեղը, մասրենին, դաղձը և այլն:

Ուսումնասիրվող ֆլորայի ցեղային սպեկտրի անալիզը ցույց տվեց, որ տարածքում գերակշռում է *Scrophularia* ցեղը: Շնորհիվ ժայռային և գերխոնավ հատվածների աճում են այդ ցեղի 5 տեսակներ: *Galium* ցեղը ներկայաց-

ված է 4 տեսակով, իսկ Հայաստանի ֆլորային բնորոշ *Centaurea* ցեղը՝ ընդամենը 3 տեսակով:

Աստվածածին սարի ֆլորայում գերակշռում են հնամիջերկրածովային տարրեր (66 տեսակ), որոնց զգալի մասը բորեալ է (47 տեսակ) [3]:

*Բուսաբանության ամբիոն*

*Ստացվել է 16.03.2001*

Գ Ր Ա Կ Ա Ն Ու Թ Յ Ու Ն

1. Օհանյան Կ. Օ. Հայկական ՍՍՀ տարածքի ֆիզիկո-աշխարհագրական շրջանացումը. Ե.: ԵՊՀ հրատ., 1977.
2. Флора Армении, т. I–VIII, Ер.: Изд-во АН Арм. ССР, 1954–1987.
3. Файвуш Г.М. – Биолог. ж. Армении, 1990, N 3 (43).

К. Г. АВАКЯН, А. В. ПОГОСЯН

## РАСТИТЕЛЬНОСТЬ И ФЛОРИСТИЧЕСКИЙ СОСТАВ ГОРЫ АСТВАЦАЦИН СПИТАКСКОГО РАЙОНА

### Резюме

Изучены флористический состав и растительность горы Аствацацин. На исследуемой территории зарегистрировано 250 видов растений из 117 родов и 37 семейств. Изучена их сезонная ритмика.

По количеству видов, преобладают семейства Asteraceae, Poaceae, Fabaceae, Caryophyllaceae и Brassicaceae. Хорологические исследования выявили преобладание древнесредиземноморских и бореальных видов.

На исследуемой территории представлены петрофиты, фриганоидная, степная и лугостепная растительность.

K.G. AVAGIAN, A.V. POGOSIAN

## VEGETATION AND FLORISTIC COMPOSITION OF ASTVATSATSIN MOUNTAIN IN SPITAK REGION

### Summary

The investigation of floristic composition and vegetation of Astvatsatsin mountain revealed 250 species from 117 genera and 37 families.

Identification of flora showed that the most common species belong to plant from the following families: Asteraceae, Poaceae, Fabaceae, Caryophyllaceae and Brassicaceae.

It has been established that the investigated area is represented by frigana, steppe, meadow and petrofits.